
ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հայագիտության մեջ տարբեր տեսակետներ կան հայերենի արաբական առաջին փոխառությունների ժամանակի վերաբերյալ: Հայերենագիտական ավանդական դպրոցը, հիմք ընդունելով հայտնի համեմատաբան, հայագետ Հ. Հյուբշմանի տեսակետը, արաբերենից հայերենին անցած առաջին փոխառությունները թվագրում է ոչ ավելի վաղ, քան մոտավորապես 7-րդ դ. կեսերով: Հ. Հյուբշմանը վկայում է, որ «...արաբների և հայերի առաջին շփումները տեղի են ունեցել մ. թ. 7-րդ դարի 40-ականներին, և, հետևաբար, արաբական փոխառություններ հայերենում չէին կարող հայտնվել 7-րդ դարից շուտ: Այստեղից ինքնըստինքյան հետևում է, որ հայ հնագույն գրականության մեջ (5-6-րդ դդ.) անմիջապես արաբերենից փոխառված բառեր առհասարակ հնարավոր չէ գտնել»¹: Ավելին, նա նշում է, որ Մեբեոսը (7-րդ դ.) դեռ, որքանով իրեն է հայտնի, արաբերեն ոչ մի բառ չի վերցրել, հատուկ անուններից ու տիտղոսներից բացի, իսկ 9-10-րդ դդ. հեղինակները, ըստ բառարանների վկայակոչության, նշված անուններից ու տիտղոսներից զատ, օգտագործել են չնչին քանակությամբ արաբերեն բառեր: Միայն 12-րդ դ.-ից սկսած գրականության մեջ ավելի հաճախ են կիրառվել արաբերեն բառեր²:

Հ. Աճառյանը Հ. Հյուբշմանի հետ համամիտ է այդ հարցում: Հայ-արաբական պատմական փոխհարաբերությունների ընթացքից ելնելով՝ նա համարում է, որ արաբերենի ազդեցությունը հայերենի վրա տեղի է ունեցել ժամանակագրական երկու փուլով. առաջինը՝ բուն Հայաստանում (7-րդ դ. կեսից մինչև 9-րդ դ.), իսկ երկրորդը՝ Կիլիկյան Հայաստանում և Ասորիքում (12-րդ դ.-ից սկսած)³:

Պատմագիտական ավելի ուշ շրջանի ուսումնասիրությունները, սակայն, ցույց տվեցին, որ հայ-սեմական, հայ-արաբական հարաբերությունները շատ ավելի վաղ շրջանից են սկիզբ առնում: Այս հանգամանքն իր հերթին հայ-արաբական առաջին փոխառությունների կատարման ժամանակաշրջանի վերաբերյալ ավանդաբար ընդունված տեսությունը վերանայելու, վերագնահատելու անհրաժեշտություն առաջացրեց:

¹ Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 297-298:

² Տե՛ս նույն տեղը, էջ 297:

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 2013, էջ 169-171:

Մասնավորապես, հայերենի արաբական առաջին փոխառությունների ժամանակի հարցում նոր մեկնաբանություն առաջարկեց լեզվաբան Ն. Մկրտչյանը: Նա նշում է, որ հայ և օտար աղբյուրների պատմագիտական վկայությունները ցույց են տալիս, որ հայ-արաբական առնչությունները սկսվել են շատ ավելի վաղ, երբ արաբական քոչվոր ցեղերը սկսեցին բնակություն հաստատել Հյուսիսային Սիրիայում և Միջագետքում: Հայ պատմաբաններն արաբ-տաջիկներին (*տաճիկ-ք*)՝ որպես հայերի հարևանների, հիշատակում են արաբական նվաճումներից շատ ավելի վաղ, ուստի, հեղինակի կարծիքով, զարմանալի չէ, որ 5-7-րդ դդ. հայ մատենագրության մեջ արդեն հանդիպում են արաբական մի շարք փոխառություններ⁴: Ավելին, դրանց թիվը, ըստ նրա, անցնում է երկու հարյուրից⁵:

Հայ դասական մատենագրության մեջ արաբերեն փոխառությունների «թվացյալ» առկայությունը Հ. Հյուբշմանը հիմնավորում է հետևյալ երեք տարբերակներից որևէ մեկով. ա) համապատասխան բառը կամ հատվածը, որտեղ այն հանդիպում է, հետագայում է մտցվել. դա այդ շրջանի հայ գրականությանը բնորոշ երևույթ է, բ) նշված աշխատությունը, եթե այն հատկապես թարգմանական է, ավելի ուշ շրջանի է. կարող են անգամ դարերի տարբերություններ լինել, գ) նշված բառը միջնորդավորված փոխառություն է, կամ արաբերենն ու հայերենը երրորդ աղբյուրից են վերցրել⁶:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայ-սեմական պատմական առնչությունները շատ ավելի վաղ ժամանակաշրջանից են սկիզբ առնում, քան 7-րդ դ. արաբական արշավանքներն էին Հայաստան և Հայաստանի նվաճումը՝ Ն. Մկրտչյանը գտնում է, որ դասական մատենագրությամբ ավանդված մի շարք փոխառյալ բառերի աղբյուրը պետք է համարել արաբերենը⁷: Վաղ շրջանի արաբերենը ավելի հաճախ ընդունված է պայմանականորեն անվանել «*արաբա-ասորական կոյնե*», որը նույն լեզվաընտանիքին պատկանող արաբերենի և ասորերենի խառնուրդից ձևավորված մի միջին լեզու էր⁸: Այս խոսակցական կենդանի լեզուն, սակայն, որևէ փաստաթղթում արձանագրված չէ, իսկ փոխառություններն էլ անցել են բանավոր ճանապարհով⁹:

Հարկ է նշել նաև, որ դրանք հիմնականում այնպիսի բառեր են, որոնք համարվել են անհայտ ծագման, թեև որոշ դեպքերում արաբերեն տարբերակի հետ զուգահեռներ են անցկացվել, ճիշտ է՝ հնչյունական և

⁴ Տե՛ս **Մկրտչյան Ն.** *Семитские языки и армянский*, Ер., 2005, էջ 80:

⁵ Տե՛ս **Ն. Մկրտչյան**, *Արաբերեն փոխառություններ հայերենում (նախքան արաբների արշավանքը Հայաստան) // «Լրաբեր հասարակական գիտությունների»*, № 2, 1984, էջ 72:

⁶ Տե՛ս **Հ. Հյուբշման**, նշվ. աշխ., էջ 298:

⁷ Տե՛ս **Ն. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 73:

⁸ Տե՛ս **Пигулевская Н. В.** *Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв.*, 1964, էջ 30:

⁹ Տե՛ս **Ն. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 55:

բառիմաստային համապատասխանությունները համարվել են «պատահական»՝ ելնելով այն հանգամանքից, որ 5-րդ դ. արաբերենից փոխառություններ չէին կարող կատարվել, մյուս դեպքում էլ մատնանշվել է դրանց հնդեվրոպական հնարավոր ծագումը:

Հայերենի հին արաբական փոխառություններին անդրադարձել է նաև ակադեմիկոս Գ. Ջահուկյանը¹⁰: Նա գտնում է, որ եթե հաշվի առնենք արաբական զանազան ցեղերի առկայությունը Իրանի և Բյուզանդիայի տարբեր վայրերում 7-րդ դ.-ից ավելի վաղ, ապա հավանական կարելի է համարել 5-րդ դ. մատենագրության մեջ հիշատակված մի շարք բառերի արաբական ծագումը: Անդրադարձ կատարելով Ն. Մկրտչյանի առաջարկած բառացանկին¹¹՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ «դժբախտաբար, հեղինակը հավանական բառերի հետ միասին բերում է նաև անհավանական զուգադիպություններ»¹²: Գ. Ջահուկյանն առանձնացնում է 11 բառ, որոնց հնարավոր աղբյուրը արաբերենն է կամ «արաբա-ասորական կոյնեն»:

Հարցի ստույգ, սպառիչ պատասխանը հավանաբար հնարավոր կլինի գտնել հետազայում կատարվելիք բազմաբնույթ ուսումնասիրություններով: Ստորև անդրադառնանք դասական մատենագրության մեջ վկայված, գիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք տված, նաև արաբերեն հնարավոր փոխառություններ որակված բառային մի քանի այդօրինակ միավորների.

1. Կաւատություն (կաւատ) - qawwād «կավատ, միջնորդ». օգտագործված է մեկ անգամ՝ Ոսկեբերանի «Մեկնութիւն Մաթեոսի» հետևյալ հատվածում՝ «*Եւ այնչափ կաւատութեան բանս և գործս անամօթութեան գործէն*»: Հ. Աճառյանը նշում է, որ հունարեն բնագրում գրված է՝ «*Եւ այնչափ բանս անամօթութեան գործէն*», այսինքն՝ այն բառը, որը ենթադրաբար պետք է թարգմանվեր «կաւատութիւն», բացակայում է: Հղում կատարելով Հ. Հյուբշմանին՝ Հ. Աճառյանը նշում է, որ այդ հատվածը հետազայում է ավելացվել¹³: Գ. Ջահուկյանը, հղում կատարելով Հ. Աճառյանին, կարծում է, որ բառը արաբերեն է¹⁴:

Փոխառությունների ստուգաբանությունը որոշելիս, ինչպես հայտնի է, հիմք են ընդունվում հնչյունաբանական և բառիմաստային համապատասխանությունները: Տվյալ դեպքում դիտարկենք համեմատվող բառային միավորների հիմնականում բաղաձայնական համակարգը, որում առանձնահատկություններն ավելի ցայտուն են

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 485-488:

¹¹ Բառացանկն ամբողջությամբ տե՛ս Мкртчян Н., նշվ. աշխ., էջ 89-10:

¹² Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 485:

¹³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Եր., 1973, էջ 562:

¹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Եր., 2010, էջ 395:

դրսևորվում: Այդ առումով վերոնշյալ բառում ուշագրավ է d>տ հնչյունափոխությունը՝ արաբերենի ձայնեղ բաղաձայնի փոխարինումը հայերենի (գրաբարի) խուլ բաղաձայնով: Բառիմաստային առումով նկատելի է լիովին համապատասխանություն:

2. Ախամախ - aḥmaq «1. հիմար, չար, 2. ապուշ»: օգտագործված է մեկ անգամ՝ Ոսկեբերանի կողմից՝ «Թեպէտև և ախամախ ինչ մարդիկ ի-ցեն» հատվածում: Հ. Աճառյանը մերժում է բառի արաբերեն ծագումը, քանի որ դա կնշանակի, թե բառը գործածված է Ոսկեդարից¹⁵: Գ. Ջահուկյանը նշում է, որ այն փոխառություն է սեմական աղբյուրից և որպես համեմատություն՝ ներկայացնում է արաբերեն տարբերակը¹⁶:

Ստուգաբանությունից զատ (ինչպես իրավացիորեն կարծում է Լ. Հովհաննիսյանը, «փոխառությունների քննությունը միայն ստուգաբանությունը չէ»¹⁷)՝ արձանագրում ենք հ>խ և գ>խ հնչյունափոխությունները: Այն կարելի է դիտարկել նաև որպես առնմանության դրսևորում: Բառիմաստի առումով համապատասխանում է արաբերեն համարժեքին:

3. Այպն «ամոթ, ծաղր» - ‘yb «1. պարսավանք, 2. թերություն, արատ»: Հ. Աճառյանը նշում է, որ ՆՀԲ-ն բառը համարում է արաբերենից կատարված փոխառություն¹⁸: Այն ունի բառակազմական տարբերակներ, օրինակ՝ *այպն առնել* - «ծաղրել», բայց քանի որ գործածված է Ոսկեդարին վերագրվող մատենագրության մեջ, Հ. Աճառյանը նրա ծագումը թողնում է անորոշ: Գ. Ջահուկյանը ևս կարծում է, որ «թերևս պետք է փոխառություն համարել վաղ արաբերենից՝ ասորա-արաբական կոյնեից»¹⁹:

Արաբերեն տարբերակի հետ համեմատությամբ՝ հնչյունաբանական մակարդակում նկատելի է b>պ հնչյունափոխությունը: Արձանագրում ենք իմաստային մերձավորություն:

4. Մահիճ «անկողին, անկողնակալ» - mahja՛ «ննջարան». գործածված է Ոսկեդարում, Հ. Աճառյանը բառի ստուգաբանությունը թողնում է անորոշ²⁰: Այն ստուգաբանվել է *մահ-իջումն* և *մահ-նիճ* տարբերակներով, որոնք, սակայն, համարվում են ոչ գիտական: Բառի առավել հավանական ստուգաբանությունն այն է, որ այն փոխառություն է վաղ արաբերենի mahja՛ «ննջասենյակ, հանգստատեղ» համարժեքից²¹ (ծագում է արաբ.՝ hj՛ «քնել, հանգստանալ» բայարմատից, maf՛al՛ տեղանիշ կադապարով կազմված ձև է, հմմտ՝ kataba «գրել», maqtab «գրասենյակ»):

Ն. Մկրտչյանը նշում է, որ «արաբա-ասորական կոյնեից» կատար-

¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, Եր., 1971, էջ 96:

¹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, ՀՄԲ, էջ 27:

¹⁷ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 6:

¹⁸ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 171:

¹⁹ Գ. Ջահուկյան, ՀՄԲ, էջ 486:

²⁰ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, Եր., 1977, էջ 235:

²¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն..., էջ 486:

ված փոխառություններում կան հնչյունափոխական օրենքներ, որոնք գործել են միայն արաբական-հայկական վաղ մերձեցումների ժամանակ և դադարել են միջին դարերում: Որպես այդպիսի օրինակ դիտարկվում է այն, որ ուշ արաբական փոխառություններում արաբերեն *j* - ին համապատասխանում է հայերեն *ջ-ն*, իսկ վաղ փոխառություններում՝ *j > q* (հազվադեպ նաև՝ *կ*)²²: Տվյալ փոխառյալ բառում, սակայն, արձանագրում ենք *j > ճ* հնչյունափոխություն, որը, միջին, հատկապես՝ կիրիկյան շրջանի հայերենի բաղաձայնական համակարգին խիստ բնորոշ, ձայնեղ բաղաձայնների խլացման օրինակ է. հնչյունափոխական այս օրենքը գործում էր արաբերենից փոխառյալ բառերում, բառի բոլոր դիրքերում²³: Բառիմաստային առումով առկա է իմաստի մերձավորություն:

5. Ատշ-իլ «ծարավել» - ‘atīš «ծարավ, ծարաված» (արաբ. atīša «ծարավ լինել» արմատից). բառը գործածվել է Ոսկեդարում: Հ. Աճառյանը այն համարում է ասորի գավառական ձևից կատարված փոխառություն²⁴: Ավելի ուշ շրջանում կատարված ստուգաբանությունների համաձայն՝ այն փոխառություն է վաղ արաբերենից կամ «արաբա-ասորական կոյնեից»²⁵: Տվյալ դեպքում առկա է հնչյունական և բառիմաստային համապատասխանություն:

6. Շալակ «պարկ, պատգարակ» - šallāq «մուրացկանի տոպրակ». Հ. Աճառյանը, հղում կատարելով Հ. Հյուբշմանին, համարում է, որ բառը փոխառվել է ասորական կամ պահլավական աղբյուրից²⁶: Գ. Ջահուկյանի ստուգաբանության համաձայն՝ բառը փոխառություն է արաբերենից: Հնչյունաբանական մակարդակում կատարվել է *q > և* անցում, արաբերենի կրկնակ բաղաձայնը փոխարինվել է հայերենի մեկ բաղաձայնով՝ *ll > և*. սա բնորոշ է տարբեր փուլերում արաբերենից հայերենին անցած բառերին: Համեմատվող բառային միավորներն ունեն իմաստային մերձավորություն:

7. Զունար «գոտի» - zunnār «գոտի». Հ. Աճառյանը նշում է, որ բառը գործածվել է մեկ անգամ ոսկեդարյան մատենագրության մեջ: Հեղինակը գտնում է, որ եթե ընդունենք, որ այն ուշ շրջանի ներմուծում է, ապա փոխառյալ է արաբերենից, իսկ եթե համարենք, որ հենց Ոսկեդարում էլ գործածվել է, ապա ասորերենից է փոխառվել²⁷: Գ. Ջահուկյանը գտնում է, որ բառը արաբերեն է, բայց թեական է արտահայտվում բա-

²² Տե՛ս **Ն. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 72:

²³ **Ս. Միքայելյան**, Միջին հայերենի շրջանում կատարված արաբական փոխառությունների բաղաձայնական համակարգը, Լեզու և լեզվաբանություն, Եր., 2017, էջ 38:

²⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 289:

²⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն..., էջ 486, **Ն. Մկրտչյան**, Արաբերեն փոխառություններ հայերենում (նախքան արաբների արշավանքը Հայաստան) // «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 1980, էջ 59:

²⁶ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 3, էջ 481:

²⁷ Տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 2, էջ 108:

ռի փոխառման ժամանակաշրջանի վերաբերյալ²⁸: Հնչյունաբանական և բառիմաստային մակարդակում համեմատվող միավորները լիովին համընկնում են:

8. Մխրանալ «հիանալ, զարմանալ, սքանչանալ» - արաբ. *shir* «կախարդել, հիացնել»։ Հ. Աճառյանը բառը թողնում է չստուգաբանված²⁹: Ն. Մկրտչյանը համարում է, որ բառն արաբերեն ծագման է: Գ. Ջահուկյանը ենթադրելի է համարում բառի սեմական (համեմատելով արաբերենի հետ) կամ իրանական ծագումը: Արաբերեն տարբերակի հետ համեմատելիս հնչյունաբանական մակարդակում նկատում ենք հ>խ հնչյունափոխություն, իսկ իմաստաբանական մակարդակում՝ իմաստի համընկում:

9. Շառան «ուղտ» - *šarīf* «ծեր էգ ուղտ»։ Հ. Աճառյանի ՀԱԲ-ում բառը ստուգաբանված չէ³⁰: Ն. Մկրտչյանը համարում է, որ բառը արաբերեն փոխառություն է³¹: Գ. Ջահուկյանը նախ տեսակետ է հայտնել, որ բառի քիչ թե շատ հավանական աղբյուրը կարող է լինել արաբերենը՝ «արաբա-ասորական կոյնեն»³², իսկ ավելի ուշ շրջանում հրատարակված իր ստուգաբանական բառարանում նշում է, որ բառի ծագումն, այնուամենայնիվ, անհայտ է³³: Հնչյունաբանական քննության ենթարկելով բառը՝ նկատում ենք f>ւ հնչյունափոխություն, իսկ իմաստային առումով տեղի է ունեցել փոխառված բառի իմաստի ընդլայնում, ընդհանրացում, որը փոխառություններին բնորոշ երևույթ է:

10. Աղխ «փականք, օղակ, ունեցվածք, ապրանք, ցեղ, զարմ, ժողովուրդ» - *'ahl* «ընտանիք, ցեղ, մարդիկ»։ Հ. Աճառյանը բառի ծագումն անհայտ է համարում, թեև նշում է ստուգաբանման բազմաթիվ տարբերակներ³⁴: Գ. Գահուկյանը կարծում է, որ բառը փոխառություն է սեմական՝ արաբական աղբյուրից³⁵: Հնչյունաբանական մակարդակում ունենք h>ղ, l>խ անցումներ, իմաստային առումով տեղի է ունեցել փոխառված բառիմաստի ընդլայնում. արաբերեն տարբերակը չունի «փականք, օղակ, ունեցվածք, ապրանք» իմաստները³⁶:

Այսպիսով՝ ամփոփելով Ոսկեդարի մատենագրության մեջ գործածված, արաբերենից 5-րդ դ. կատարված փոխառությունների հնչյունաբանական և բառիմաստային քննությունը՝ եզրահանգում ենք, որ դրանք, արաբերեն բառեր լինելով հանդերձ, ուշ շրջանում կատարված ներմուծումներ են, քանի որ դրանց բնորոշ են միջինհայերենյան շրջա-

²⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն..., էջ 486:

²⁹ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, Եր., 1979, էջ 225:

³⁰ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 497:

³¹ Տե՛ս Ն. Մկրտչյան, Արաբերեն փոխառություններ հայերենում, 1984, էջ 80:

³² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն..., էջ 486:

³³ Տե՛ս Գ. Ջահուկյան, ՀԱԲ, էջ 581:

³⁴ Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 131:

³⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, ՀԱԲ, էջ 38:

³⁶ Տե՛ս Баранов Х. Большой арабско-русский словарь. Т. 1. М., 2002, էջ 48:

նի արարերեն փոխառությունների հնչյունաբանական-հնչյունափոխական օրինաչափությունները (d>տ, b>պ, ք>խ, զ>ձ և այլն)³⁷:

Բանալի բառեր – *արարական փոխառություն, արարա-ասորական կոյնե, գրարար, սիջին հայերեն, բաղաձայնական համակարգ, հնչյունաբանական և իմաստային համապատասխանություն, պատահական նմանություն*

СОНА МИКАЕЛЯН – О времени арабских заимствований в армянском языке. – В статье рассматриваются арабские заимствования, обычно датируемые V–VII вв., с точки зрения фонетики и семантики. Рассматриваются традиционные, а также новые обоснования времени этих заимствований. Сравнительный анализ некоторых фонетических особенностей в арабских заимствованиях позволил прийти к выводу, что их всё-таки следует отнести к более позднему периоду, поскольку им свойственны закономерности среднеармянского языка.

Ключевые слова: *арабское заимствование, сирийско-арабское койне, древнеармянский язык (грабар), среднеармянский язык, система согласных звуков, фонетическое и семантическое соответствие, случайное сходство*

SONA MIKAELYAN – The Issue of the Period of Arabic Borrowings in Armenian. – In this article, we have tried to carry out phonological and semantic research of direct Arabic borrowings of the Armenian language of the period between the 5th and 7th centuries. We have touched upon the traditionally accepted, then also newly developed theories and their justifications concerning the period issue of the Arabic borrowings in the Armenian language. Comparing the sound features of a number of Arabic borrowings, we have concluded that these words should nevertheless be considered as later period borrowings, as they are typical of phonetic rules of the Middle Armenian period.

Key words: *Arabic borrowing, Arabic-Assyrian koine, Grabar (Old Armenian), Middle Armenian, consonant system, sound and meaning compatibility, casual similarity****

Ներկայացվել է՝ 30.05.2019

Գրախոսվել է՝ 12.07.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019

³⁷ Տե՛ս **Ս. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 37-48: